ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 10

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Այգավան համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի <<Այգավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> ավագանու թիվ 51-ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

/Զեկ. Վ.Հարությունյան/

2. Համայնքի համար ձեռք բերված գույքը գույքագրման ցանկում ընդգրկելու մասին:

/Զեկ. Վ.Հարությունյան/

3. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքի 22 հունվարի 2021 թվականի << Համայնքում հողի հարկի արտոնություն տալու մասին>> ավագանու թիվ 7 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

/Զեկ. Վ.Հարությունյան/

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքի 12 օգոստոսի 2020 թվականի<< Արարատի մարզի համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի՝ Այգավան համայնքի գլխավոր հատակագծի վերաբերյալ>> ավագանու թիվ 33 որոշման վերնագիրը և տեքստային մասերը լրամշակելու և նոր խմբավորմամբ շարադրելու մասին:

/Զեկ. Վ.Հարությունյան/

5. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքի <<Ժպիտ>> մանկապարտեզի աշխատանքների վերակազմակերպման մասին:

/Զեկ. Վ.Հարությունյան/

Կողմ – 6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

3.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի <<ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի Մարզի Այգավան համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի <<Այգավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> ավագանու թիվ 51-ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ:

1. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891պահուստային միջոցներ հոդվածից 20000,0 /քսան միլիոն/ ՀՀ դրամ տալ, 09-01-01-51 նախադպրոցական կրթություն՝ 4639 Այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածին, ճշտված պլանը սահմանել 21000,0 /քսանմեկ միլիոն/ ՀՀ դրամ:
2. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891պահուստային միջոցներ հոդվածից 300,0 /երեք հարյուր/ հազար ՀՀ դրամ տալ, 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4239-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածին, ճշտված պլանը սահմանել 300,0 /երեք հարյուր / հազար ՀՀ դրամ:
3. 11-01-02-51 Այգավան համայնքի պահուստ 4891պահուստային միջոցներ հոդվածից 20,0 /քսան հազար/ ՀՀ դրամ տալ, 04-02-01-55 Բույսերի պաշտպանության միջոցառումներ 4239-Այլ ընդհանուր բնույթի ծառայություններ հոդվածին, ճշտված պլանը սահմանել 20,0 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Կողմ –6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

3.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 12

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 77-րդ հոդվածի 3 կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1 –ին մասի 2)-րդ կետով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ձեռք բերված Համակարգչային բլոկը՝ արժողությամբ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ ընդգրկել գույքագրման ցուցակում:

Կողմ – 6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 22 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ << ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և հիմք ընդունելով Արարարտի մարզպետարանից ստացված թիվ 01//01609-2021 գրությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքի 22 հունվարի 2021 թվականի ավագանու թիվ 7 որոշման մեջ կատարել փոփոխություն և լրացում՝ որոշման 2-րդ տողի <<<<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի գ) ենթակետով>> նախադասությունը փոխարինել <<<<Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի>> 230 հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետով>> նախադասությունով:

Կողմ –6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 12 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ<< ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՐԱՐԱՏ-7 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԾԻ՝ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ>> ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 33 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ ԵՎ ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍԵՐԸ ԼՐԱՄՇԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱՎՈՐՄԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34 հոդվածի 4-րդ կետով , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, ինչպես նաև 26.02.2021թվականին Արարատի մարզպետարանից ստացված թիվ 01/01759-2021 գրությունը:

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքի 12 օգոստոսի 2020թվականի ավագանու թիվ 33 որոշման վերնագրի և տեքստային մասերի լրամշակված և նոր խմբավորմամբ շարադրված տարբերակը:

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Այգավան համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) հաստատելու մասին:

1. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)»

գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Այգավան համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Ձև 1				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրի հողերից՝	**1,24**		
			Բնակավայրերի	**1,23**
1	Այլ հողեր	0,29	Տնամերձ կառուցապատման	0,29
2	Այլ հողեր	0,15	Տնամերձ կառուցապատման	0,15
3	Այլ հողեր	0,18	Տնամերձ կառուցապատման	0,18
4	Այլ հողեր	0,19	Տնամերձ կառուցապատման	0,19
5	Այլ հողեր	0,19	Տնամերձ կառուցապատման	0,19
6	Տնամերձ կառուցապատման	0,02	Հասարակական կառուցապատման	0,02
7	Տնամերձ կառուցապատման	0,026	Հասարակական կառուցապատման	0,026
8	Տնամերձ կառուցապատման	0,12	Հասարակական կառուցապատման	0,12
9	Ընդանուր օգտագործման	0.07	Հասարակական կառուցապատման	0.07
	Գյուղատնտեսական հողերից՝	**0,24**	**Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ.**	**0,24**
10	Պտղատու այգի	0,24	**արդյունաբերության**	0,24
			Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.	**0,01**
11	Հասարակական կառուցապտման	0.01	կապի (կապի կայան)	0,01

2. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ –6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

3.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արարատի մարզ Այգավան համայնք
հեռ. 0234-6-00-89, 043-46-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2021 թվականի N 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԺՊԻՏ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15)-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Վերակազմակերպել և վերսկսել Արարատի մարզի Այգավան համայնքի <<Ժպիտ>> մանկապարտեզի աշխատանքները ս/թ ապրիլի 1-ից:

Կողմ –6 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
4. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
6. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ